ԲԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ

ՅԻՇԻ՛Ր, ՄԵՌՆՈՒՄ ԵՍ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յիշի՛ր, գինուորն ես Օրհնեալ Յիսուսի,
Նրա անունից համարձակ խօսիր,
Որ Տէր Յիսուսը կեանքն է ամէնքի,
Որ Տէր Յիսուսը թանկ է ամենից,
Որ նրանից ջոկ ապրելը զուր է,
Որ նրա Խօսքը ամենազօր է:
Որ Յիսուսով է կեանքը քաղցրանում,
Արհամարհուածը՝ կամաց բարձրանում,
Որ մեղաւորը դառնում է արդար,
Ապրում Յիսուսով՝ յաւերժ, դարեդար:
Էլ ի՞նչ ես մահին նայում սարսափով
Կամ էլ վախենում ահ ու տագնապով.
Չէ՞ որ կանչուել ես հենց դրա համար
Եւ դու մեռնում ես... ապրելու համար:

Տես, մահի թեւով սարսափն է սուրում,
Բայց մահից այն կողմն դըրախտն է բուրում,
Մարմին-պատեանից ելիր ու գնա,
Դըրախտի զմրուխտ պարտէզում մնայ:
Կը տեսնես այնտեղ հրեշտակներին,
Կը տեսնես այնտեղ Տիրոջըդ փառաց,
Սիրոյ կանթեղը՝ Իր ձեռքում վառած:
Այնտեղ կ'իմանաս արժէքը խաչի,
Արձագանքները ախ ու հառաչի:
Կը տեսնես նաեւ Փրկչիդ վէրքերը:
Որ պիտի պատմեն Յիսուսիդ սէրը:
Եւ արժէ մեռնել այդ սիրոյ համար,
Բայց մենք մեռնում ենք... ապրելու համար:

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@